ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1, հեռ.6-82

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» փետրվարի 2012 թվականի N 9

ՄԱՐՏԻ 8-Ի՝ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձյան «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 41 հոդվածի և հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու 2011թ. դեկտեմբերի 11-ին «Թումանյան համայնքի 2012թ. բյուջեն հաստատելու մասին» թիվ 32-Ն որոշումը՝ որոշում եմ.

Թումանյանի քաղաքապետարանի աշխատակազմի կանանց՝ մարտի 8-ի միջոցառման կազմակերպման առթիվ Թումանյանի քաղաքապետարանի 2012թ. բյուջեի կառավարման ապարատի նախահաշվից նվերներ տալու համար «Այլ նպատակային նյութեր» (հոդված 4269) հատկացնել 50 հազար դրամ, համաձայն 16.01.2012թ. թիվ 6 պայմանագրի:

Համայնքի ղեկավար՝ Լևոն Զավարյան

ք. Թումանյան
2012թ. փետրվարի 27

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1, հեռ.0253-57-6-82

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» փետրվարի 2012 թվականի N 8-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու «Թումանյան համայնքի տարածքում 2012թ. համար տեղական տուրքերի և վճարներ հաստատելու մասին» 2011թ. նոյեմբերի 7-ի N 28-Ն որոշումը և Թումանյան համայնքի բանակիչ Վանիչկա Վազգենի Դանիելյանի դիմումը՝ որոշում եմ.

Թույլատրել Թումանյան քաղաքի բնակիչ Վանիչկա Դանիելյանի՝ 2012 թվականի ընթացքում իրականացնելու ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:

Համայնքի ղեկավար՝ Լևոն Զավարյան

2012թ. փետրվարի 22
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1, հեռ.6-82

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» փետրվարի 2012 թվականի N 7

«ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ» ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011թ. նոյեմբերի 29-ի թիվ 380-Ա որոշման 3 կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման կարգը հաստատելու մասին» N 1582-Ն որոշման 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով՝ որոշում եմ.

1. Հաստատել «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման» Թումանյանի համայնքային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2.Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

Համայնքի ղեկավար՝ Լևոն Զավարյան

2012թ. փետրվարի 22
ք. Թումանյան

Հավելված 1
ՀՀ Լոռու մարզի
Թումանյան համայնքի ղեկավարի
2012թ. փետրվարի 22–ի
թիվ 7 որոշման

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

Երվանդ Շաքարյան - հանձնաժողովի նախագահ՝ քաղաքապետի տեղակալ

Արման Մոսինյան - հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ քաղաքապետի օգնական

Հանձնաժողովի անդամներ՝

Մարտուն Պետրոսյան - Թումանյանի քաղաքային համայնքի Ավագանու անդամ

Անուշ Ամիրջանյան - Թումանյանի քաղաքապետարանի աշխատակազմի կրտսեր պաշտոնների 1-ի ենթախմբի առաջատար մասնագետ- հաշվապահ

Էդգար Հախվերդյան - Թումանյանի քաղաքապետարանի աշխատակազմի կրտսեր պաշտոնների 2-րդ ենթախմբի 1-ի կարգի մասնագետ

Նորիկ Թորոսյան - ԱՁ

Համայնքի ղեկավար՝ Լևոն Զավարյան

Հավելված 2
ՀՀ Լոռու մարզի
Թումանյան համայնքի ղեկավարի
2012թ. փետրվարի 22 –ի
թիվ 7 որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն աշխատակարգով սահմանվում են արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասի գնահատման Թումանյանի համայնքային հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործառույթները, աշխատանքների կազմակերպման կարգը:

2.Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, միջազգային պայմանագրերով և սույն աշխատակարգով:

3.Հանձնաժողովին կից՝ հանձնաժողովի անդամների կողմից լիազորված ներկայացուցիչների ընդգրկմամաբ կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր:

II.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.Հանձնաժողովի խնդիրներն են՝

1) կազմակերպել համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասների գնահատման գործընթացը.

2)համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների ընդհանուր հաշվառումը.

3)համայնքի հանձնաժողովների կողմից կազմված ակտերի ներկայացումը մարզային հանձնաժողով:

III.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5.Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստի ձևով:

6. Հանձնաժողովի նիստեր հրավիրում է հանձնաժողովի նախագահը կամ տեղակալը՝ նախագահի բացակայության դեպքում:

7.Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում և նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ նրա տեղակալը:

8. Հանձնաժողովի կողմից գնահատման ու հաշվառման են ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանկան անձանց պատճառված վնասները:

9.Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝

1) կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.

2) ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը.

3)գնահատվում է գույքին պատճառված վնասի չափը:

10.Եթե արտակարգ իրավիճակների հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս, ապա Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչություններից դեպքի մասին

տեղակտվությունը տրամադրվում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

11.Տեղեկատվությունը ներառում է՝

1)դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.

2)տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության և աշխատանքի վայրերը.

3) դեպքի վայր մեկնած՝ փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի (անձանց) կազմը (անձնական տվյալները).

4)դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

12. Հանձնաժողովը գործում է հետևյալ ուղղություններով՝

1)գյուղատնտեսությանը հասցված վնասների գնահատում.

2)բնակչության գույքին հասցված վնասների գնահատում.

3)ենթակառուցվածքներին հասցված վնասների գնահատում.

4)բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում:

13. Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրվաբանական անձանց պատճառված վնասները գնահատող հանձնաժողովի կազմում՝ ըստ ուղղությունների ընդգրկվում են արտակարգ իրավիճակների, առխոջապահության, գյուղտնտեսության, կապի և տրանսպորտի, քաղաքաշինության բնագավառների մասնագետներ և մասնագիտացված կառույցների ներակայցուցիչներ, ովքեր պետք է ուսումնասիրեն, հաշվառեն և գնահատեն ստեղծված իրավիճակն ու հավանական վտանգները:

14.Համայնքային հանձնաժողովների կողմից կազմված ակտերը քննարկվում են մարզային հանձնաժողովում, և համաձայնեցված ակտերը ներկայացվում են հանրապետական հանձնաժողով: Արտակարգ հետևանքների պատճառով ֆիզիկական իրավաբանական անձանց պատճառված վնասների մասին վերջնական տեղակտությունն ամփոփում և հրապարակում է արտակարգ իրավիճակների հտևանքով պատճառված վնասները գնահատող հանրապետական հանձնաժողովը:

15. Հանձնաժողովի նիստերի ժամանակ ընդունված ակտերը և կազմված արձանագրություններն ստորագրում են հանձնաժողովի անդամները:

Համայնքի ղեկավար՝ Լևոն Զավարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1, հեռ.6-82

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» փետրվարի 2012 թվականի N 6-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԱՄԱՆ ԵՎ ՀՈՂԱՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայան Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, նույն այդ որոշման մեջ լացումներ և փոփոխություններ կատարելու մասին՝ 03. 06. 2010թ. թիվ 816-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ին ընդունված և 27.04. 2010թ. փոփոխված, «Իրավական փաստաթղթեր չպահանջված անահատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի և հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված շինություններն ընդգրկված չեն ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում Թումանյանի համայնքի ղեկավարը՝ որոշում է.

1.Օրինականացնել հանգուցյալ Արուս Մխիթարյանին, Ստեփան Մխիթարյանին, Գայանե Հակոբյանին և Ռուբիկ Մխիթարյանին պատկանող Թումանյան քաղաքի 1-ին թաղամասի, 1-ին փողոցի՝ թիվ 2/1 տան նկուղային հարկի 6,5 մ^2 և հավանոցը՝ 5 մ^2 ընդհանուր արատաքին մակերեսով տարածքները:

2.Ինքնակամ կառուցված շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտար և պահպանում են քաղաքաշինական նորմերը:

3.Ինքնակամ կառուցված շինությունները կառուցվել են 1970 թ.:

4. Թումանյան քաղաքի 1-ին մասի, 1-ին փողոցի թիվ 2/1 տան համասեփականատեր՝ հանգուցյալ Արուս Մխիթարյանին , Ստեփան Մխիթարյանին, Գայանե Հակոբյանին և Ռուբիկ Մխիթարյանին սեփականաշնորհված բնակելի տան զբաղեցրած 0,03989 հա մակերեսով հողամասը համարել , որպես սեփականություն:

5. Հողամասի սահմանները որոշվում են քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով :

6.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի ստորաբաժնում:

Համայնքի ղեկավար՝ Լևոն Զավարյան

2012թ. փետրվարի 22
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1, հեռ.6-82

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» փետրվարի 2012 թվականի N 5

«ԱՐԳԻՇՏԻ-1» ՍՊԸ-ԻՆ
ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արգիշտի-1» ՍՊԸ-ի տնօրենի գրությունը, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 2853920 վկայականը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 46-րդ հոդվածի 2-րդ մասով, 62-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 37,38 հոդվածներով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի բ ենթակետով՝ որոշում եմ.

1. Լոռու մարզի Թումանյան քաղաքի 3-րդ մաս հասցեում «Արգիշտի -1» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող ՓՀԷԿ-ի շենքի զբաղեցրած և նրա սպասարկման համար անհրաժեշտ, ընդհանուր 1278.0քմ մակերեսով հողամասը, հողի կադաստրային արժեքով՝ 122688 /հարյուր քսաներկու հազար վեց հարյուր ութսունութ/ ՀՀ դրամով, ուղակի վաճառքի ձևով օտարել «Արգիշտի-1» ՍՊԸ-ին՝ ճանաչելով նրա գնման նախապատվության իրավունքը:
2. Համայնքի քաղաքապետարանին՝ «Արգիշտի-1» ՍՊԸ-ի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասի առուվաճառքի պայմնագիր:
3. Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի փոստային հասցեն՝ ՀՀ Լոռու մարզ ք. Թումանյան 3-րդ մաս ՓՀԷԿ-2

Համայնքի ղեկավար՝ Լևոն Զավարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1, հեռ.0253-57-6-82

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» փետրվարի 2012 թվականի N 4-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու «Թումանյան համայնքի տարածքում 2012թ. համար տեղական տուրքերի և վճարներ հաստատելու մասին» 2011թ. նոյեմբերի 7-ի N 28-Ն որոշումը և Թումանյան համայնքի բանակիչ Վարդան Հովակիմի Հախվերդյանի դիմումը՝ որոշում եմ.

Թույլատրել Թումանյան քաղաքի բնակիչ Վարդան Հախվերդյանին՝ 2012 թվականի ընթացքում իրականացնելու ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:

Համայնքի ղեկավար Լևոն Զավարյան

2012թ. փետրվարի 10
ք. Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Թումանյան համայնք, Կենտրոնական փողոց 1, հեռ.6-82

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«09» փետրվարի 2012 թվականի թիվ 3-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Թումանյանի քաղաքային համայնքի ավագանու «Թումանյան համայնքի տարածքում 2012թ. համար տեղական տուրքերի և վճարներ հաստատելու մասին» 2011թ. նոյեմբերի 7-ի թիվ 28-Ն որոշումը և Թումանյան համայնքի բանակչուհի Հայկուշ Սարգսյանի դիմումը՝ որոշում եմ.

Թույլատրել Թումանյան քաղաքի բնակչուհի Հայկուշ Սարգսյանին՝ 2012 թվականի ընթացքում իրականացնելու ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառք:

Համայնքի ղեկավար՝ Լևոն Զավարյան

2012թ. փետրվարի 09
ք. Թումանյան